ԱՐԴԵ
Ք՝ ՅԱՂ
ԱՒԹ
Ս ՅԻՇ
ԷՔ Ի ՔՍ:

Ծանոթ. Գրերը թեև խոշոր են, սակայն քարի անկոկ մակերեսին պարզ չեն երևում, ուստի հիշատակագիրն էլ լրիվ չի պարզաբանվում: Մանավանդ որ սկիզբը չի կարդացվել:

Ի դեպ, գյուղամիջի «Ագեղցի» մատուռ-սրբատեղիի մեջ պահպանվում է քառակող կոթողի բեկոր՝ երկաթագիր արձանագրությամբ, որը լուսանկարից չի ընթերցվում:

542. ԿՈԹՈՂ. «Ագեղցի» մատուռում, դժվարընթեռնելի:

ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽՍԻՍ Է ... ԱՎԵՏԻՍ ԵՒ ԽԱԹՈՒՆ ... :

Ծանոթ. Մատուռը միանավ փոքր սրահ է գյուղի մեջ, կիսավեր, կիսաշրջան խորանով, ներսում խաչաբեկորներ: Երկմտանքով կարդացվում է.

Ա Խ Թ Ա Լ Ա

Պատմական եղելություններին քաջագիտակ մատենագիրներ Կիրակոս Գանձակեցու և Ստեփանոս Օրբելյանի երկերում, ինչպես և ձեռագրաց հիշատակություններում այս վայրը ընդերկրյա հարստությունների շնորհիվ վաղուց ի վեր կոչվել է Պղնձահանք, իսկ հոգևոր կենտրոնը՝ Պղնձահանքի վանք, ավելի ուշ՝ Ախթալա:

Ջալալյանցի լսածով՝ ոմն վարդապետի անեծքով. «Ուխտաւորեալ բնակիչք մեռան հետ զհետէ և ուստի անուանեցաւ Ախտալի»,[41] ասել է թե՝ ախտերով, հիվանդություններով լի:

Այս և մի քանի հասվանական այլ ստուգաբանությունների թվում գուցե թե նախընտրելի է *աղ թալա՝* սպիտակ բացատ մեկնությունը, եթե անտեսենք ծծմբաթթվին հարող առնչումը:

Բնակավայրը հիշվում է նաև Սպլէնձահան անվամբ: Այսպես, 1227թ. Գրիգոր Նյուսացու «Ժողովածու գործոց» աշխատությունն արտագրող Սիմէոն գրիչը հայտնում է, թե այն գրել և ավարտել է «յերկիրս Հայոց, մերձ ի Լաւռէ, ի վանքն, որ կոչի Սպլէնձահան, ընդ հովան և Սուրբ [Աստուած]ածնին, յիշխանութիւն Իվանէ աթաբագին՝ շինողի վանիցս, զոր երկար ժամանակ արասցէ Տէր, որդովք հանդերձ»:[42]

Ինքնին կարևոր է անվան *Սպլէնձահան = Պղնձահանք* տարբերակը[43] և այն, որ համարվում է *մերձ ի Լաւռէ*, և դեռ կենդանի էր եկեղեցին կառուցող Իվանե Աթաբեկը: Հայ և վրաց պատմասկան որոշ սկզբնաղբյուրների համաձայն, Ախթալան սկզբնապես կոչվել է Ագարակ, ԺԲ դարի վրաց տարեգրի վկայությամբ՝ Ճոճկանի ձորից «դեպի հյուսիս գտնվում է Ագարակի եկեղեցին... գմբեթավոր, մեծակառույց այժմ կոչվում է Ախտալա»:[44] Դավիթ Քոբայրեցին, մանրամասնելով 1177 թ. իրադարձությունները, գրում է, որ սպարապետ Իվանե Օրբելյանը մերձավորների և իր խնամակալությունը վայելող, իրավազրկված թագաժառանգ Դեմնային «Բերեալ յԱգարակ դղեակ»՝ հուսալով ամրոցի և նրա հանդեպ գտնվող «զանառիկն *Կայան* և *զԿայծոն*» բերդերի վրա, որոնք գտնվում են Ագարակի հանդեպ: Այն բանից հետո, երբ Թիֆլիսի ամիրապետ Քուրդ Արծրունին միացավ թագավորին, ծանր կացության մեջ ընկնող Իվանեն իր նոսրացող ուժերով, «որդովքն և կնաւն, և ամենայն աղխիւն գայ մտանէ յանառիկն Լաւռէ»:

---

[41] *Ս. Ջալալյանց*, Ա, էջ 85:
[42] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դ., կազմեց Ա.Ս. Մաթևոսյան, Եր., 1984, էջ 154:
[43] Գուցե զՊլէնձահան – զՊղէնձահա՞ն:
[44] *Պարույր Սուրադյան*, Հայաստանի վրացերեն արձանագրությունները, էջ 200 (Ծանոթագրություն):

Հետևցնելի է, որ Ագարակը միայն Ախթալան կարող է լինել, որի հանդեպ էին Հաղբատի Կայան և Շնողի Կայծոն ամրոցները, և այստեղից է Իվանեն մեկնել ու ամրացել Լոռի բերդում: Ագարակը չի կարող ներկայիս Ստեփանավանի շրջանի նույնանուն գյուղը լինել (որի տեղն անորոշ է Ստ. Օրբելյանի մոտ), քանի որ այն ոչ ամրոց ունի, ոչ էլ ապարանք-դղյակ, ուստի Իվանեն պիտի պատսպարվեր Լոռի բերդում՝ ինչպես և վարվեց հետո:

Պղնձահանքը, Ագարակը, Սալէնձահանը Ախթալայի անուններն են՝ տրված տարբեր հեղինակների կողմից՝ տարբեր ժամանակներում:

Ախթալայի ամրակուռ բերդն ու վանական համալիրը գտնվում են ՀՀ Լոռու մարզի Երևան-Թբիլիսի երկաթգծի համանուն կայարանից 2,5 կմ հյուսիս-արևմուտք, Դեբեդի ձախափնյա կիրճերից մեկում, նույնանուն փոքրիկ ավանում:

Երեք կողմից դժվարամատչելի ուղղաձիգ լեռնապատնեշներով, հյուսիսից բարձրաբերձ պարիսպներով ներփակ հրվանդանի հարթակում կիսավեր պահպանվող այս ամրոցի կառուցման ժամանակը Գ. Շախկյանը համարում է Ժ դարը, Կյուրիկյան թագավորության սկզբնական ժամանակաշրջանը, թեև այդ մասին հաստատուն փաստարկներ չեն ներկայացվում:[45]

Համալիրի մոտեցման միակ ուղին հյուսիսից է, որտեղից բացվում է աշխարհիկ և հոգևոր շինությունների ողջ համայնապատկերը, ուր գերիշխում է ամրոցի կամարակապ մուտքի առանցքներով դրված գլխավոր՝ Ս. Աստվածածին եկեղեցին, որը հավատացյալ հույների կողմից կոչվում է Մեյրամանի (Գ. Աղանյանց): Խոշորածավալ այս աղոթարանը «Իր հորինվածքով գմբեթավոր բազիլիկ տիպից սերված տարբերակ է» համարում ճարտարապետության դոկտոր Գ. Շախկյանը:[46] Եկեղեցին արտաքուստ ու ներքուստ ներփակված է ուղղանկյուն որմերի մեջ: Արևելյան թևում գետնատարած կիսաշրջան խորանն է՝ կողերին մեկական փոքր, կրկնահարկ ավանդատներով: Արևմուտքից կցարկված է կամարակապ նախասրահ՝ հարավային հարակից *սենյակով:* Հյուսիսային մուտքին հպված է մի փոքր սրահ, գուցե՝ Իվանե Զաքարյանի դամբարանը: Քանդակազարդ երկու մուտքերը բացված են արևմտյան և հարավային ճակատներից: Տաճարի ներքին մակերեսը ջլատված է երկու հզոր մույթերով, որոնցից խորանակողեր ձգվող կամարային համակարգի վրա բարձրացել է թմբուկը: Ախթալայի Մարիամ Աստվածածին եկեղեցու թմբուկը մինչև գմբեթատակ գոտին, համաձայն Լալայանի վկայության, «քանդուել է դարուս սկզբում» (1900 թ.) երկրաշարժից:[47]

Եկեղեցին դրսից շարված է համակ սրբատաշ մեծածավալ բազալտե, ներսից՝ ճեղքված անկանոն քարով ու տեղ-տեղ թրծած աղյուսով, որը սվաղվել է ամբողջովին և պատվել Հին ու Նոր Կտակարանային սյուժեներով ճոխ ու բարձրարվեստ որմնանկարներով, որոնք դասական արվեստի մնայուն արժեքներ են:

Ախթալայի Ս. Աստվածածին եկեղեցու պատերին արձանագրություններ չկան, և նրա կառուցման ժամանակի խնդիրը հետազոտողների մոտ տարակարծություններ է հարուցել: Պ. Մուրադյանը հենվելով վանքից 1 կմ հարավ-արևելք գտնվող Մարիամ Կյուրիկյանի 1188 թ. խաչքարի՝ *կանգնեցի զՊղնձահանացս Հոդիատի սուրբ Աստվածա-*

---

[45] *Գ. Շախկյան,* Լոռի, էջ 130:
[46] Նույն տեղում:
[47] «Ազգ. հանդ.», VII-VIII, էջ 429:

ծինս տեղեկատվության վրա, այն վերագրել է Ախթալայի Գլխավոր եկեղեցու կառուցմանը: Այս վարկածը դժվար է հիմնավորված համարել, քանի որ տվյալ դեպքում խոսքը վերաբերում է հենց խաչքարին և ոչ թե եկեղեցուն (որի մասին խոսք չկա, և ինչը նկատել է հենց ինքը Պ. Մուրադյանը) և ապա տրամաբանական պետք է համարել, որ սույն եկեղեցուն առնչվելու դեպքում խաչքարը կկանգնեցվեր տաճարի մոտ (որն ընդունված կարգ էր) և ոչ թե մի ուրիշ վայրում: Եվ ապա արձանագրության մեջ խոսքը գնում է ոչ թե շինություն կառուցելուն, այլ խաչքարը կանգնեցնելուն, և Հոդահատի տեղում կանգնեցված Ս. Աստվածածինը հենց այս խաչքարի անունն է, ինչպես Տերունական, Ս. Սարգիս, Ամենափրկիչ և այլն:

Պղնձահանքի համալիրի տեղում Կյուրիկյանների կողմից կառուցված եկեղեցի է եղել, որ Իվանեն «զոր իւր շինեալ էր վանս վրաց, առեալ ի հայոց»:[48]

Դատելով ոսկեհուռ մեծ խաչը Պղնձահանքից Նորավանք վերադարձնելու մասին Ստ. Օրբելյանի պատմության շարադրանքից՝ կարելի է պնդել, որ Ախթալայի Ս. Աստվածածինը գործում էր առնվազն 1216 թ.:[49] Հավանական է ընդունել, որ եկեղեցին կառուցել է Իվանե աթաբեկ Զաքարյանը՝ 1215 թ. այն դարձնելով երկաբնակ քաղկեդոնականների հոգևոր-մշակութային գլխավոր կենտրոն,[50] և ուր հետագայում թաղվեցին ինքը՝ Իվանեն և որդին՝ Ավագը: Ամրոցի ներսում պահպանվում են սրահավոր փոքր եկեղեցին, երկհարկ ապարանքը, սեղանատունը, կացարանները, իսկ դրսում՝ զույգ եկեղեցիները, Բարսեղ, Գևորգ միանավ աղոթարանները, կացարանամերձ մատուռը, ամրոց-դիտակայանը և այլ ավեր ու կանգուն հուշարձաններ:

Ամրոցի մուտքը, վանքը և եկեղեցիները վերականգնվել են ՀՀ Պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության կողմից 1938-1988 թթ.:

Մեծ եկեղեցում թաղումներ են կատարվել, ինչը խստագույնս արգելված էր միաբնակ հայերի ծիսակարգով: XIX դարում եկեղեցին ու նախասրահը վեր են ածվում թիֆլիսաբնակ Մելիքովների իշխանական տան ննջեցյալների հանգստարանի, ուր և մնում են վրացերեն ու ռուսերեն լեզուներով հիշատակագրված նրանց սալատապանները:

Արձանագրություններ կան գյուղի արևելակողմում գտնվող թաղածածկ փոքրիկ մատրան բարավորին և մի քանի խաչքարերի ու տապանաքարերի վրա: Հնագույնը Մարիամ իշխանուհու արձանագրությունն է, որն ունի 1188 թվականը, մնացածը վերաբերում է XIII դարին:

ԱԽԹԱԼԱՅԻ ՎԱՆՔ

543. Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ. աբսիդի հյուսիսային բնում, 1 տող.

ԷՓՍԷ:

Ծանոթ. Ներկագիր այս մուկագրությունը, թերևս, ԷՍԷՓ, ՀՈՎՍԷՓ, բացվել է որմնանկարի մաքրման-վերականգնման ընթացքում, ծեփի տակ, որտեղ նկատվել են մի քանի հայագիր անուններ՝ ներկաթաւի և անընթեռնելի: Չափազանց կարևոր է, որ տաճարի հսկայածավալ որմնանկարների հեղինակները, այդ թվում Հովսեփը, եղել են հայ արվեստագետներ, որոնք իրենց անունները մայրենիով «ծածկագրել» են սվաղի տակ՝ թերևս հավատացած լինելով, որ դրանք ի հայտ կգան մի օր, ինչպես այս դեպքում:

---

[48] *Կիրակոս Գանձակեցի,* էջ 238:

[49] *Ստեփանոս Օրբելյան.* Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 352:

[50] Երկնտելի է, որ Մարիամ Կյուրիկյանը ի զորու լիներ իրագործելու այսպիսի ծավալուն մի ձեռնարկում, և նրա հսկայական մակերեսները ծածկեր գունագեղ որմնանկարներով՝ խորշելով նաև քաղկեդոնիկ դավանության հակումներից: